վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը):

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատական ծախսերը պետք է կատարվեն փաստացիորեն անհրաժեշտաբար և, որ դրանց քանակը ողջամիտ է (տե՛ս, Ֆիլիպն ընդդեմ Հունաստանի թիվ 1 1991 թվականի օգոստոսի 27-ի վճիռը, Ծարքեր Ա, էջ 25, կետ 74, կամ Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի 1988 թվականի մարտի 25-ի վճիռը):

Դատարանն արձանագրում է, որ «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ի և «Լավա-Աղբյուր» ՍՊԸ-ի միջև 07.08.2026 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի թիվ 1 հավելվածի 2-րդ կետով ծառայությունների արժեքը սահմանվել է 600.000 ՀՀ դրամ:

Սույն գործով Հայցվորի ներկայացուցիչը ներկայացրել է հայցադիմում, ապացույցներ, դիրքորոշում, գործը քննվել է գրավոր ընթացակարգով:

Դատարանն ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, նկատի ունենալով, որ հայցը բավարարվում է, գտնում է, որ սույն գործով հայցվոր կողմի փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը կազմում է 300.000 ՀՀ դրամ, ուստի Պատասխանողից հօգուտ Հայցվորի պետք է բռնագանձել 300.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը,

ՎՃՌԵՑ

1. «Լավա-Աղբյուր» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու (վերացնելու), որպես հետևանք պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման վերաբերյալ արձանագրությունները ստորագրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել.

անվավեր ճանաչել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Լավա-Աղբյուր» ՍՊԸ-ի միջև 11.03.2026 թվականին կնքված պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/5-4 պայմանագրի միակողմանի լուծումը, որպես հետևանք պարտավորեցնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ստորագրել թիվ 01 և թիվ 02 արձանագրությունները՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման վերաբերյալ:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից

հօգուտ «Լավա-Աղբյուր» ՍՊԸ-ի բռնագանձել 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից հօգուտ «Լավա-Աղբյուր» ՍՊԸ-ի բռնագանձել 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEC5-185E-4DA6-95C1 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am